ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«10» նոյեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ստեփանավան համայնքի ավագանու հարգելի անդամներ, վարչական բնակավայրերի ղեկավարներ, համայնքային ծառայողներ, համայնքապետարանի և ենթակայությամբ գործող ՀՈԱԿ-ների հարգելի աշխատակիցներ, սիրով շնորհավորում եմ բոլորիս ՏԻՄ օրվա առթիվ:

Այսօր մեզ է վիճակված նպաստել ՏԻՄ համակարգի զարգացմանը և այս պատվաբեր առաքելության մեջ յուրաքանչյուրս պետք է առաջնորդվենք նվիրումով և այս համակարգում նոր խոսք ասելու պատրաստակամությամբ:

ՏԻՄ գործունեության արդյունավետությանը նպաստելու նպատակով Ստեփանավանի համայնքապետարանում արդեն ձևավորված է նոր մոտեցում՝ կադրերի ընտրության քաղաքականությունը վարել բացառապես գիտելիքի հիման վրա: Դեռ ավելին՝ աշխատակիցների աշխատանքային արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ամենօրյա ռեժիմով տարվում են աշխատանքներ և տարվելու են, իսկ ովքեր չեն հասցնի քայլել մեզ հետ, իրենց տեղը կզիջեն ավելի երիտասարդ կադրերին:

Եվս մեկ անգամ շնորհավորելով տեղական ինքնակառավարման մարմիններին եւ ՏԻՄ աշխատակիցներին՝ մաղթում եմ հաջողություն, նպատակասլացություն, հաստատակամություն եւ շարունակական առաջընթաց՝ ի շահ Ստեփանավան համայնքի զարգացման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**